



ԳԱՐԵԳՐԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԻՆՆԵՐՈՐԻ ԴԱՐԻ ԶԵՌԱԳՐԱԿԱՆ ՄԻ ՀԱՏԱԿՈՏՈՐ ԵՎ ԱՏՈՍ ԱՆՁԵՎԱՑՅԱՑ ԻԾԽԱՆ



Ելլող թաքնակ պ. Կարապետ Բիղեճյան մի ձեռագիր ապե- տարան ունի վատ պահված վիճակում, որը գրված է թղթի վրա, արևելյան բո- լորգրով 24 (=1311) թվականին «յա- նապատիս, որ կոչի Այրի ձոր»։ Մեջ ենք բերում հիշատակարանի այն մասը, որ կապված է ձեռագրի ծագման տեղի և ժա- մանակի հետ։ Մեր գրեցաւ սը ամետարանս ի հոշակաւոր մենաստանի։ Ի թուիս հայոց 24, Յանապատիս, որ կոչի անուամբ Այրի ձոր։ Ընդ հովանեաւ սը յաբու... (այստեղ մի թուղթ է ընկած. հետևյալ թղթի առաջին տողի կեսը չի կարդացվում, եղծված է) ...նոցի սրբոց։ Բայց գրեցաւ սը անետա- րանս։ Ստուգեալ և ընտրեալ յամենալաւ տւրինակէ»)։ Դժխարանում ենք Այրի ձորը նույնացնել Այրից կամ Գեղարդա վանքի հետ, որովհետև գրության այդ ձևը տեղի անվան պատահական չէր. ունենք և մի այլ ավետարան նույն Այրի ձորում, «Ի թուակա- նիս 267 (=1294)», ձեռամբ մեղապարտիս անարուեստի, տիմարի և փցուն գրչի, ի վանս հրեշտակաբնակ, որ կոչի Այրի ձոր, ընդ հովանեաւ սը նահատակիս և ածաբնակ խորանայս սը նարութի եւ սը Կարապետ եւ սը Լուսաւորիչ։

«Ի առաջնորդութի ամենիմաստ ամենա- գով, քաղցրահայից եւ արդիւնակատար վարդապետի Ստեփաննոս, որ է ի մարմնի կառուցեալ եւ յանմարմնոց բերեալ յինքն զվարս»**։

Երկրորդ ձեռագրի հիշատակարանը, ոչ

*) Հիշատակարանը Հովհաննու վերջում։

**) Երեան, Պետ. Մատենադարան, № 87, Մեր հիշատակարանը Հայ Զեռագրաց (անտիպ)։

միայն հաստատում է նախընթացի տեղի և սուրբ վայրերի նույնությունը, հիշատա- կարանից թուղթ ընկած լինելու. իրողու- թյունը, այլև հավանական դարձնում գրչի- ների նույնությունը. երկու գրիչների համե- մատության ստուգություն կատարելու հա- մար տարիս ենք բնագրի մի երեսի նմանա- հանությունը — պատկ. 1։ (Թերթի մեծու- թյունը 24½X16½ սմ.։ Գրի սյունյակները 19X12 սմ., երկուսը միասին, Լուսանկաբր քոչ փոքր է բնագրից՝ 16X10 սմ.։ Հատվա- ծը 7ռւվ. Ը. 16—23։

Ձեռագիրը նորոգված է և նկարազարդված հետագայում։ Միանգամայն հավանական ենք համարում, որ նա նկարազարդված չէր գրչության ժամանակ, որովհետև զարդա- գրության ոչ մի հետք չունի բնագրի լու- ապրեներում կամ մանրանկարչական տա- ռեր հատվածների սկզբում, Ներկա տերու- նական պատկերները, այսինքն ավետումն, ծնունդը, մկրտությունը, այլակերպություն- նը, Ղազարի հարությունը, երթն Երոտա- դեմ, խաչելությունը, թաղումը, ավետումն դժոխոց — հարությունը, համբարձումը, վեր- ջին դառնալուանը, կիսակատար խորաննե- րը, ավետարանիչների պատկերները, իրենց սկզբնազարդերով (միայն Մատթեոսը ըն- կած), շատ միջակ արվեստի գործեր են և նորոգության ժամանակ ավելացրած։ Ավե- տարանների առաջին թերթերը ավելացրած են նկարչության հետ տարբեր գրչությամբ։

Հետագա առաջողների մեջ հնագույններն են Հայրապետ Է. Անդրեաս Եղեայրները, որ քահանաներ են, ԺԳ դարի վերջերում կամ ԺԴ-ում։ Երկրորդ ստացողը ումն Նեք- րոզ, որ ստացել է այս ավետարանը «իմա- րաքաղաքիս Շամախիս, եւ տվի յիշատակ իբեղիս, որ Բնահայրաքա լրոյի, որ կացցէ

այս սբ եկեղեցիս պահապան իմ զառակացն եւ յիշատակ հոգոյ իմոյ...»։ Ոմն տեւր Աւելետիս եւ իր կողակիցը՝ Խանուս կաղմել են տվել և կազմողն է Փիլիպոս։ Տեր Ավետիսը ավետարանը տալիս է հիշատակ «ի դուռն իզոտպուզ տայ վկային»։ Սրանց ժամանակակից է դարձին Միրզին, որ զգաղ-բիւրն եբեր ի վանքն»։ Այս վերջին հիշատակարանը կիսեղծ է և մի մասով բոլորովին անընթեռնելի։

Այսչափ ձեռագրի ծագման և պատմության մասին, բայց մեզ հետաքրքրողը այլ բան է։

Բ

Ավետարանը կազմի կողքեղից ունի մի մի թերթ մագաղաթ պահպանակ, գրված ուղիղ անկյուն միջին երկաթագրով, որոնք հատվածներ են կյուրեղ Նրուսաղեմացու։

Առաջին սյունյակ

- 1 բքս ալս
 - 2 դապեւին
 - 3 ացւոյ
 - 4 անիս հայոց
- (կտրված մնացածը)

Գ

Գուրգեն Աղանյաց իշխանին իր որդու հետ հիշում են Թովմա Արծրունին և Հովհաննես կաթողիկոսը։ Նրանք ժամանակակից են Սմբատ Ա-ի և Ափշին ոստիկանի իշխանության առաջին տարիներին։ Որպես զի խուռն ունենանք ավելի հստակ որոշելու նրանց ժամանակը, հատկապես Գուրգեն Արծրունու մահվան տարեթիվը, որ մեր Հիշատակարանի գրության ամենաուշ ժամանակը կլինի, հիշենք մի քանի դեպքեր ժամանակագրության հետ կապված։ Աշոտ Ա. մեռնում է ըստ Թովմա Արծրունու 31թ և ըստ Ասողիկի 3և թվականին, մեկը չորս, մյուսը հինգ տարի նշանակելով նրա թագավորության տևողությունը։) Համեմայն դեպ 890—891 Սմբատի գահակալության առաջին տարին է։ Դերենիկ Արծրունին, Աշոտ թագավորի փեսան, սպանվում

կոչումն ընծայության ԺԲ. զլից»^{*)}։ Պահպանակներին բնագիրը մեզ մի առանձին նորություն չէ տալիս, թեև հետաքրքրական է հին ուղղագրական և հնչյունաբանական տեսակետներով։ Նրա կարևորագույն արժեքը հնագրական է, որպես հայ գրչության թվականով հայտնի ամենահին և հազվագյուտ մնացորդներից մեկը։ Ուստի և տալիս ենք բնագրի նմանահանությունը և ընթերցումը՝ տպագրվածի համեմատությամբ (պատկ. 2—5 և 4—5)։

Բարեբախտաբար հատակոտորների վերջում ունինք Ձեռագիրը ստացողների անունները, որոնք մեր պատմության մեջ հայտնի անձնավորություններ են և մենք բանասիրական ուսումնասիրությամբ հնարավորություն ունենք նրանց ժամանակը որոշելու։ Ահա այդ թանկագին հիշատակարանի մնացորդը։

Երկրորդ սյունյակ (պատկ. 5)

- 1 գրչի դրել ի մատն
 - 2 նիս յայմ գսուրք
 - 3 եւ զտենչալի եւ
 - 4 զհոգեւորիչ բանքս.
 5. Արդ աղաչեմ զնթեր
 6. ցաւղսդ եւ զլսաւղսդ.
 7. յորժամ ընթեռնուք
 8. գստացաւղս սորա զտր
 - 9 Գուրգէն Արծրունի եւ
 - 10 զորդի իւր Ատոմ յիշ
- (մնացածը կտրուած)։

է 886 թվին, թողնելով երեք զավակ՝ Աշոտ, Գագիկ, և Գուրգեն— 9, 7 և 5 տարեկան^{**)}։ Նրանց խնամակալ է նշանակվում Աշոտ թագավորի կողմից՝ իր Շապուհ եղբոր ձեռքով՝ Մովսէս իշխան Գագիկ Արծրունին, Ապուլբուռան կոչումով։ Սմբատի առաջին երկու տարիները նրա հաջորդության տարիներն էին, ուստի, երբ Դերենիկի որդի Աշոտը՝ իբրեւ ավագ եղբայրների մեջ, ընծաներով դիմում է Ափշին ոստիկանին՝ նրա պաշտպանությամբ Սմբատի դեմ հակառակ գիրք բռնելու, միայն քաղաքավարական ընդունելություն է գտնում։ Աշոտ այդ ժամանակ 14—15 տարեկան պիտի լիներ։

Աշոտը Ափշինի մոտից վերադառնալուց հետո Գագիկ Ապուլբուռանի կողմից ճնշման է ենթարկվում, մասամբ խրախուսված Սմբատի կողմից. բայց առավելապես ծրագիր ունենալով հետզհետե ձեռք ձգել Ար-

^{*)} Թովմա Արծրունի. 258; Ասողիկ, Ս. Պետերբուրգ, էջ 159;

^{*)} Տպ. Վիեննա, 1832;

^{**)} Թովմա, 245;

ծրույնաց փահեղենությունը: Ըստ Ռովմա Արծրունու՝ երեք եղբայրների դեմ կատարված դավին մասնակից էր և Աղձնյաց Գուրգեն իշխանը, որը ինքն էլ վամենում էր Դերենիկի որդիների հաշվին ընդարձակել իր իշխանությունը: Քայց Գուրգեն խուկայր զմասն աշխարհին յինքն գրաւել, մանաւանդ զՈստանն Ուշտունեաց, որ էր տեղի սպանման հօր իւրոյ, գինս արեան համարելով զնա: Այս առթիւ վեճ է ծագում Դերենիկի որդի Աշոտի և Գուրգեն Արծրունու մեջ, որ Գագիկ Ապուրուանի միջնորդութեամբ, իսաղաղութեամբ է վերջանում: Գուրգենը այնուհետև քաշվելով իր Կանգուար բերդը, մեռնում է մի քանի օրից հետո արկածով^{*)}: Սրանից հետո պիտի կատարված լինի երեք եղբայրների բանտարկությունը, որի համար և Արծրունյաց ազատները դիմում են Գուրգենի որդի Աստմին յայստան Կանգուար գտանել զելս իրացնա: Բայց Գագիկ Ապուրուանը դավաճանական ընթացք է բռնում և Սմբատի դեմ, որի հետևանքով էլ Սմբատը պարտություն է կրում Տաթունը հափշտակող Ահմատի կողմից: Այս դեպքից անմիջապես հետո կատարվում է Ապուրուանի սպանությունը՝ Դերենիկի երկրորդ որդի և ապագայի թագավոր Գագիկի ձեռքով:

Մենք կարող ենք ճիշտ որոշել այս դեպքերի թվականները: Երբ Գագիկ սպանեց Ապուրուանին, զե ևս եղեալ էր ամաց հնգետասանից, իսկ մենք գիտենք, որ նա ծնվել էր ՅԻԸ թվականին, որի վրա ավելացնելով սպանության ժամանակի տարեթիվը՝ 15, կստանանք 894 կամ հայոց ՅԻԳ թվականը: Այս թվականից մի տարի առաջ մոտավորապես կատարվել էր երեք եղբայրների բանտարկությունը, իսկ դրանից էլ առաջ մեռած էր Գուրգենը, որովհետև Գագիկի բռնությունների դեմ մի ելք գտնելու համար Արծրունյաց ազատները դիմում են Գուրգենի որդի Աստմին: Ուրեմն Աղձնյաց Գուրգենի մահը կարող ենք նշանակել առնուազն երկու տարի առաջ, այսինքն 892 թվին: Սրանով պարզած կլինենք հաստատապես, որ մեր հատակոտորը գրված չէ ավելի ուշ, քան 892 թվականը:

Բայց հնարավորություն ունենք մոտավորապես ամենավաղ սահմանն էլ ճշտել: Ինչպես երևում է, Գուրգեն Անձնացին և որդին՝ Աստմը գրասեր և գրականությամբ զբաղվող մարդիկ էին. Կյուրեղ Երուսաղեմացու Վեդշումն ընծայութեանը

միակ գիրքը չէր, որ նրանք ստացել կամ մեկնեայն էին հանդիսացել: Արդմանհ վկայի թարգմանության մասին ունինք հետևյալ մատենագրական ծանոթությունը:

«Ազնականութ Յի Քի թարգմանեցաւ վկայաբանութիւն ծախին Քաի յԱսորի գրոց ի Հայս հրամանաւ ածապահ տն Գուրգենայ Անձնացեաց տն ՅԻԲ թուականուն հայոց ի բարեխաւառի և յազնականութիւն անձին իւրոյ և ամուսնոյ իւրոյ Հեղինէի ածասիրի և որդւոց իւրոց Տաճատայ և Աստուծայ: Եւ աւանդեաց նոյն փնքն տր Գուրգեն տաւնախմբել զաւր յիշատակի սբյս, որ աւր երեսուն էր Արեգ ամսոյ ի փառս ամենաւս Երրորդութեայ յոժմ եւ միշտ եւ յաւ^{*)}»:

Նույն մատենագրական ծանոթության երկրորդ փոփոխական ունինք ավելի կրճատ ձևով «Թարգմանեցաւ վկայութի ծառայիս Քի յԱսորոց գրոց ի հայ գիրս հրամանաւ Գուրգենայ Արծրունոյ ի թուականուն հայոց ՅԻԲ ի բարեխաւառի անձ (Տ!) իւրոյ և Աստմայորոյ իւրոյ: Եւ աւանդեաց նոյն ինքն Գուրգեն տաւնախմբել զաւր յիշատակի նորա ի մեհեկի ամսոյ Բ ի փառս Այ»:

Եւ որք կատարէք զօր յիշատակի սբոյն զտր Գուրգէ, յաղօթս յիճեցէք^{**)}:

Հիշատակարաններից առաջինը համարում ենք ավելի սկզբնական, երկրորդը՝ առաջինից կրճատված. ներմուծում համարել Հեղինի և Տաճատի անունը, հիմք չունի Այսպիսով ոչ միայն Աղձնյաց Գուրգեն իշխանի ընտանիքի համար ավելի լրիվ տեղեկություն ունինք, այլև թե Տաճատը ավելի ավագ էր, եղբակացնելով անունների դասավորությունից: Վեդշումն ընծայութեան հիշատակարանի դրութեան ժամանակ Տաճատը վախճանված էր, գուցե և Հեղինեն, ապա թե ոչ երկրորդ որդու անունը չէր հիշի ստացող Գուրգեն Արծրունին, լուծված ավագ որդու մասին: Այս իրողությունը դրական հիմք կարող է ծառայել այն հանգամանքը, որ Գուրգենի հաջորդը Աստմն է: Այստեղից կարող ենք և մյն եզրակացությունը հանել, թե ՅԻԲ թվականը ամենավաղ սահմանը չէ մեր ձեռագրի ծագման թվականի համար, այլ ավելի հետո, երբ մեռած էր ավագ եղբայր Տաճատը: Այսպիսով

*) Մեր «Յիշատակարան» Հայ Ձեռագրաց (անտիպ): Առել ենք Ձոհրաբի Յիշատակարանների ժողովածուից, Բեռլին, արքայական մատենադարան. Փարիզի № 48 ձեռագիր:

**) Ձեռագիր Երուսաղեմի № 173, Ճառնտիր, Թուրք, գրված 1356 թվականից առաջ: Մեր «Յիշատակարան» Հայ Ձեռագրաց (անտիպ):

ձեռքի տակ ունինք մի ձեռագրի մնացորդ, որ ժամանակակից է թվականով՝ հայտնի հայոց ամենահին ձեռագրին, որ Լազարյան ճեմարանի 887 թվականի ավետարանն է, գուցե և մի քանի տարով ավելի հին:

Դ.

Ատոմ Անձևացին ժամանակի Արծրունի իշխանների մեջ մեկն էր, որ դիրք, հեղինակություն և համակրանք էր վայելում: Նա խոհեմ և զորույշ մարդ էր, բայց և զրասեր: Տեսանք, թե ինչպես Արծրունյաց ազատները նրան են դիմում մի ելք գտնելու Գագիկ Ապովրուանի ոտնձգությունների դեմ. ապա Կայսիկների ապստամբության ժամանակ, ընդդեմ Սմբատ արքայի, Արծրունյաց գահերեց Աշոտ Գերենիկյանի և Մովսեսի հետ: «Եւ զօրքն Անձևացեաց քաջադոյնս արիացան» և հաղթեցին թշնամուն: Ըստ Ռովմա Արծրունու այս դեպքը պատահեց 30Ա (= 902) թվականին*): Հովհաննէս կաթողիկոսը երկու առթիվ մեծ համակրությամբ է խոստում Ատոմի մասին. առաջին անգամ, երբ Յուսուփ ոստիկանը Սմբատին նահատակել տալուց հետո կամենում է հարձակվել և Գագիկ վասպուրականցու երկրորդի վրա, վերջինս խելքի եկած, զգուշանում է նրա դեմ, մինչև քաշվում է. նա Ատրպատանի և երկիրն առժամանակ շուշ է քաշում: Այս ինքնապաշտպանության գործին իր մասնակցությունն է բերում «նաև մեծիմաստ և բարեխորհուրդ և արդարակորով իշխանն Անձևացեաց Ատոմ ոչ սակաւ զօրութեամբ մատուցանէր թիկունս օգնականութեան թագաւորին Գագիկայ», ազատ պահելով իր երկիրը Յուսուփի շարունակյալ որոգայթներից**):

Երկրորդ անգամ, երբ Յուսուփը ազատված իր բանտարկությունից դարձյալ Ատրպատական է գալիս և Կորդուաց լեռներից սպառնում խուժել դեպի վասպուրական, զգուշանում է Գագիկը՝ զինվորական պատրաստությամբ ժողովրդին տեղափոխելով «ի ծործորս լեռանցն Կոգուփի և Մաղկոտան»: «Սոյնպէս և մեծ իշխանն Անձևաց Ատոմ հանճարիմաստ փոհականութեամբ վաղընդիոյթ վաղահոգակ խորհրդով զաշխարհս տէրութեան իւրոյ ամբառնայր ի գլուխ ամուր լեռանց աշխարհին, ամրապահեստ զնոսա առնելով ի խորածորս և ի խորխորակ վիհս փոսոց, և ի ծործորս բլրոց, առաջապահս ևս և նա գաղթին լինելով իւրայովքն զօրօք բազմի վառելովք***): Այս

նախազգությունները տեսնելով Յուսուփը դեսպան է ուղարկում Ատոմին, տալով անհատական հարկը պահանջելով, որ և կատարվում է նրա կողմից, երկիրը գալիք շարքից ազատելու համար: Առաջին դեպքը կարող ենք նշանակել 914 թվականին կամ քիչ հետո, իսկ երկրորդը՝ 926-ին:

Բացի վերը հիշվածներից Ատոմի գրասիրության ուրիշ ապացույցներ ևս ունինք: Էջմիածնի Կարինյան ցուցակի թ. 449. Ժողովածու ձեռագրի մեջ, գրված 1380 թվին «ի վանս Թովմայի առաքելոյ, որ յԱգուլիս քաղաքի ի Ղազար քահանայէ», ի միջի այլոց կա և մի դրութուն, «Թուղթ Արամայ առ Ատոմ Անձևացեաց իշխան ի պատասխանի նորին թղթոյ: Տարաբախտաբար իշխանի թուղթը մեր ձեռքը չէ հասել. Արամի պատասխանն էլ ունինք միայն մի հայտնի օրինակով, որի մասին հայտնի է Էջմիածնի գիտնական միաբան Գալուստ Տեր Մկրտչյանը, բայց չէ հրատարակված: Օգտվում ենք նույն գիտնականի այլ առթիվ հաղորդած տեղեկություններից*): Գրության սկզբում և:

«Աստուծապահ և աստուածասէր իշխանիդ իմոյ մեծադահի, ածառունկ իմաստիցդ գիր և հրաման նհաս առ իս, զոր ընթերցեալ յոժ ուրախ եղէ զԱյս: Իսկ վերջավորությունը «Եւ որ, զչուրն ի գիրն փոխեաց, զձեռ տրտմութիւնդ յուրախութիւն փոխեսցէ, ի Տէր խնդալ ձեզ ի տարեկան կենդանութեան տօնս կատարել»: Ե.

Ե.

Նախընթաց պրակի մեջ տեսանք, որ Ատոմ Անձևացու վերջին հիշատակությունը ունինք 926 թվին, իսկ առաջին անգամ Հայոց ՅԻԲ և փրկչական 873 թվին: Տեսանք նաև, որ հոր մահից հետո, երբ նա ժառանգեց իշխանությունը, դիրք և հեղինակություն ունեցող իշխան էր, ապա ուրեմն առնվազն առաջին հիշատակության ժամանակ, այսինքն 873 թ. տուտ տարեկան պիտի լինեի, որով 30 տարեկան կլինեի իր իշխանության առաջին տարուամ: Այսպիսով նրա կյանքի հանդուրժաններ կարող ենք նշանակել մոտավոր կամ ճիշտ 863, 873, 892, 902, 914-ից քիչ հետո, 926 թվականները, որով վերջին թվին նա կլինեի ոչ պակաս, քան 63 տարեկան, բայց հավանորեն և ավելի:

Այս հաշիվներով կամենում ենք և որոշել այն գրությունների ժամանակագրական սահմանը, երբ կատարված են նրանք: Դրանցից առաջինը համարում ենք Արամի

*) Կ. Պոլս, 1852, էջ 277.

**) Յովհ. Կաթողիկոս, Նրուսաղէմ, 1867, էջ 364.

***) Անդ, 410—411.

*) Արարատ 1894, էջ 128.

հետ կապված թղթակցությունը: Տարաբախտաբար ձեռքի տակ չունենք Արամի գրությունը, բացի Անանիա Մոկացու թղթերի մեջ եղած ակնարկությունները, խոսքով Անձևացու դեմ գրած թղթի մեջ^{*)}: Թուղթը գրված է ՆԴ (= 954) թվականին, երբ արդեն մեռած էր խոսքով Անձևացին, որ ալեխօք ծերութեան դարգացեալ մարդ էր, ուրեմն գոնէ, 65 տարեկան: Նա աշակերտել էր Արամին, ոչի ժամանակը պետք է նշանակել, ու ուշ քան ժ. դարի առաջին տասնամյակը, այն էլ, հավանորեն առաջին տարիներով, բայց հավանորեն ավելի վաղ:

Մեզ թվում է, Արամի գրության վերջում մի ակնարկություն ունինք ժամանակի որոշման համար: Արամը իր թուղթը վերջավորում է մաղթանքով, ինչպես Տերը ջուրը «ի գինի փոխեաց, զձեր տրտմութիւնդ յուրախութիւն փոխեսցէ» Այս ակնարկություն է իշխանի կյանքի հետ կապված մի եղելություն, գուցէ հոր մահվան: Համենայն դեպս թուղթը գրված է 882-ից հետո, երբ Ատոմ ինքնիշխան իր և «մեծագահ» Եթե այս ենթադրությունը համապատասխան լինի իրողության, Արամի գրության ժամանակը պետք է նշանակել 892—893 թվին:

Զարբհանալյան հիշում է ՆՂ (= 981) թվականի մի ձեռագրում պահված մի գրություն, որ Մաղազունյաց Տերն Արտավազդ Ատոմ Անձևացու հրամանով «բացայայտեաց զսուրբ պատուիրանս», որ նշանակում է Ավետարանների մեկնությունը: «Կայ թուղթ մ' ալ յանուն Թովմայի առ Ատոմ իշխան»։ անհավանական չէ, որ մեր Ատոմը լինի^{**)}:

Կարինյան Յուդ. թ. 920 մեծ Ճառնտրի մեջ մի գրություն ևս կա «Երանելոյն Տեառն Ատովմայ Անձևացեաց եպիսկոպոսի ասացեալ ներբողեան ի սուրբ Կարապետն Յովհաննէս»։ Սկս. «ԶԿարապետին մեծի զիշատակս տօնելով զկուսութեան հանդէս գովեսցուք»։ Ի՞նչ նույն են եպիսկոպոս և իշխան Ատոմ Անձևացիները, նշանակում է մեր Ատոմը իր կյանքի վերջին տարիները հեղեղեցական կոշումն է ընդունել և ապա եպիսկոպոս ձեռնադրվել, հավանորեն նախորդը հանդիսանալով խոսքով Անձևացու, որ Անձևացյաց եպիսկոպոսությունը տալիս էր Անանիա Մոկացու կաթողիկոսության առաջին տարիները (941—965): խոս-

քով Անձևացին համենայն դեպս ՅՂԹ (950) թվին եպիսկոպոս էր և այդ թրվին գրված է նրա պատարագամատուցի մեկնությունը իր Սահակ որդու ձեռքով^{*)}: «Մեկնութի գրոցս պատրիկ եղև ի ձեռն խոսրովայ Անձևացեաց եպիսկոպոսի յոյժ հետևողի պատուիրանացն Այ, ի թուականի Հայոց ՅՂԹ (= 950) և առաջին գծագրութի գրոցս եղև ձեռամբ Սահակայ որդոյ նորին Տն խոսրովու»:

Իսկ Ատոմագիր Տոնացուցակը, Ասողիկի վկայությամբ, տարբեր անձի գործ է. «Յայսմ ժամանակի պայծառանայր առաքինութեամբ հայրն Գաղիկ, առաջնորդ ուստին սուրբ Ատոմայ, որ զիշատակ մարտիրոսացն միայաբեալ ի գիր, որ Ատոմայ գիր անուանեալ ասի»^{**)}: Մի ժամանակագիր ևս գրում է. «Թգրէ Սմբատ ամա ԻԴ, ի սորա աւուրս էր Գաղիկ վզպտ, զիշատակս մարտիրոսացն հաւաքեաց ի գիրք մի»^{***)}: Եվ հիրավի. Ճառնտրիների մեջ ունինք նրա վկայաբանական թարգմանությունների մասին տեղեկություն. օրինակ, «Պատմութի որդւոյ թագաւորին հոռոմոց, որում անուն էր Ներսէհ, որ նաւորդեաց ընդ համատարած ծովն զկնի ճգնաւորացն յԵգիպտոս, կրանաւորեցաւ ի վանա բաղմակեցաց սբ հաւրն Անտոնի»։ Սկս. «Ի պատմել զվարս բարկաշտիցն»։ Վերջում հետևյալ մատենագրական ծանոթությունը կա.

«Եւ հայր Գաղիկ, որ թարգմանեցի զպատմութիւնս զտոստիկ զորդոյ թագաւորի յասորոց ի հայս և աւանդեցի ուստի իմոյ և ժողովրդեան, որոց լուծալ զվարս երանելոյնս (Տ!) նախանձաւորք լերուք սորայ նահատակութեն, որ վս Բի յանձն էառ զկամաւոր ազբատութիւն»^{****)}:

2.

Հաստատելով մեր հատակոտորների մտաւոր ժամանակն ու հնութիւնը, տալիս ենք նրանց նույնատիպ պատկերները իրենց ընթերցվածներով և տարբերակներով Վիննայի 1832 թվի տպագրության համեմատությամբ:

*) Մեր «Երանելոյն Տեառն Զարբհանայն», «Պատմ. Հին դարութեան», 537:


**) Ս. Պետերբուրգ 1835, էջ 160:

***) Ձեռ. Երուս. № 1445, 75ա:

****) Ձեռ. Երուս., № 1, Ճառնտր, էջ 112:

*) Արարատ, 1897, էջ 276:

**) Զարբհանայն, «Պատմ. Հին դարութեան», Վիննայի, 1897 էջ 566:



Պատկեր 2

Բնագրում ձախ սյունյակի զիրը 20,8x8,5 սմ.
 Լուսանկարում նույնը 15x6,5 սմ.:

Առաջին պահպանակ Ա երես Ա սյունյակ պատկ. 2

Պալագիր (տպագր. եր 218)

- 1 Իրացդ. որ ասացին ի Դանիէլ.
- 2 Եւթնորորդաց ամացդ. բայց
- 3 պատմեսցես աւ դու թե եւ դու
- 4 Բեթղեհէմ տուն Եփրաթայ.
- 5 սակաւաւոր իմն եիր դու ի հազա
- 6 բաւորս Յուդայ. զի ի քէն ել
- 7 ցէ ինձ իշխան Իղի. եւ ելք նո
- 8 ռա ի սկզբանէ մինչեւ յաւուր
- 9 ցն յաւիտենից. Այդ վասն
- 10 տեղեացն զի էմացի էր յառա
- 11 ջագույն գիտես. Եւ զայն
- 12 որ ի հարիւրորդի. անեսներ
- 13 որդի. յառաջնորդի սաղ
- 14 մոսի անդ գրեալ է. ահաւասիկ
- 15 լուաք զնա յԵփրաթայ. աւ
- 16 գտաք զնա ի դաշտս մայրեաց
- 17 զի յառաջ քան զսակաւ մի ամ
- 18 աղ մայրի ունէր տեղին. լու
- 19 ար դու ապաքէն զոր Ամբակու
- (մն ասաց ցտէր մերձենալ ամաց
- յայտնի լիցիս իսկ արդ զի՝նչ նշանակ
- է ով մարգարէ գալստեան տեառն:
- Ասէ յառաջա*)

- 1 ասացն ի Դանիէլ
- 2 եօթնորորդ

- 4 Եփրաթայ
- 5 էիր

- 7 Իսրայէլի
- 8 յաւուրսն
- 9 ալ

- 10 երեսաղեմացի

- 13 առաջնորդի
- 14 ճանդ շունի
- 15 զնմանէ յԵփրաթայ

- 18 զտեղին

Առաջին պահպանակ առաջին երես երկրորդ սյունյակ պատկ. 2

Տպագիր (տպ. երես 269)

- 1 ագո (յն ի մէջ երկուց կենդա)
- 2 նութեանց յ(այտնի լիցիս)
- 3 Զայս առ տր ա (սէր յայտնա)
- 4 պես. եթե ես ե(կեալ մարմնովդ կեց)
- 5 ցես. եւ մեռեա(լդ և յարուցե)
- 6 ալդ ի մեռելոց (միւս անգամ կեց)
- 7 ցես. Եւ արդ յ(որմէ կողմանէ)
- 8 յէմին գայցէ (թէ յարեւելից)
- 9 թե յարեւմտից, թէ ի հիւսիս
- 10 ոյ. թե ի հարաւոյ ասա դու մեզ)
- 11 ճշմարիտ մեզ (Պատասխա)

- 3 տէրն
- 4 Թէ եկեալ «ես» շունի


- 9 Թէ
- 10 Թէ
- 10-11 ասա գու մեզ ճշմարիտ: Նա է
- պատասխանի ճշմարտիւ եւ ասէ.

- 12 նի ետ եւ ասէ ճշ(մարտիւ Թէ
- Աստուած ի թե)
- 13 մանայ եկեսցէ (և Թեմանն)
- 14 Թարգմանեալ (կոչի հարաւ. Եւ)
- 15 սորբն ի լեռնէ (ի Փառան լեռնէ.
- Փառանն)
- 16 անտառախիտ (Թանձրամայրի)
- 17 վասն սորին ի(սկ միաբանութեամբ)
- 18 ասէ սաղմոս(արանն Գտաք)
- 19 զնա (ի դաշտս մայրեաց)
- 20-24 (կտրված)

- 2 Զեռագրի դասավորութիւնը պիտի լի-
- ներ ճասա դու ճշմարիտ մեզ
- Պատասխանի ետ եւ ասէ ճշմարտիւ

- 18 սաղմոսարանն

*) Փակագծի մեջ առնվածները լրացնում ենք տպագրվածից: Բնագրի մեջ սյունյակի մեծութիւնն է 20,8 X 8,5 սմ.: Լուսանկ. 15 X 6,5 սմ.:



Պատկեր 3

Լուսանկարը փիշ փոքր բնագրից

Առաջին պահպանակ երկրորդ երես առա

ջին սյունյակ պատկ. 3 *)
Տպագիր (տպ. երես 220)

- 1
- 2 (զանտն նորա) ծմա
- 3 (նուէլ Արդ ընդ)դէմ դառնան
- 4 (այսորիկ որդի)քն հրէից սով
- 5 (որ իսկ են նորա) ճշմարտութեանն
- 6 (հակառակ կալ) եւ ասեն այս
- 7 (պէս, թէ ոչ) է գրեալ եթե կոյ
- 8 (սն, այլ աղջի)կն. իսկ ես թե
- 9 (պէտ եւ ներեցի) ց—զիջից ըստ
- 10 (բանիցն, սակայն) եւ այնպէս
- 11 (զճշմարտութ)իւնն գտանեմ
- 12 (Արդ հարցուց)ք զնոսա. կոյս
- 13 (ի բռնադատել ի)ւրում երբ ճշէ.
- 14 (յառաջ քան զ) բռնադատելն թե
- 15 (զկնի խնդր)է աւանական
- 16 (Արդ եթէ այլ տ)ւրեք ասեն գիրք.
- 17 (եթէ բողոք բար)ձ աղջիկն եւ ոչ
- 18 (ոք էր որ օգնէր) նմա ոչ վասն
- 19 (կուսի ասէ: Այլ) զի յայտնա
- 20 (գոյն ուսջիք թէ) եւ կոյսն ի
- 21-25 գիրս սուրբս աղջիկ կոչեցաւ, լուր
դու գրոցն թագաւորութեան վասն
Արիսաքայ Սովմանի տացւոյն,
զի ասէ Սւ էր

2 էմմանուէլ

4 որդիք հրէիցն

7 եթէ

8 թէպէտ

13 ընթացի վրա հարցական չկա:

14 Բռնադատեալ եթէ

Առաջին պահպանակ երկրորդ երես երկրորդ սյունյակ պատկ. 3

Տպագիր (տպ. եր. 220)

- 1 աղջիկն գեղեցիկ յոյժ. այդ
- 2 զի կոյս իսկ ընտրեցին եւ ած
- 3 ին զնա առ Դաւիթ. այն յայ
- 4 տնի է. դարձեալ ընդդէմ դառ
- 5 նան հրեայք եւ ասեն. ի վերայ
- 6 Ախազու ասացաւ բանդ վասն
- 7 Եղեկիա. Արդ եկ ընթերց
- 8 ցուք զգիրս. խնդրեա դու քեզ
- 9 նշան ի տէ այլ քումմէ. կամ
- 10 ի խորութիւնս կամ ի բարձրու
- 11 թիւնս. նաեւ նշանս իսկ նոր
- 12 արինալիս ինչ պարտի երեւել.
- 13 նշան ջուրն որ ի վիմէն խոսե
- 14 ցաւ. նշան ծովուն պատառ
- 15 ել. նշան արեգականն անդ
- 16 րէն յետս դառնալ. եւ այս
- 17 պիտի ինչոր յատնագոյն
- 18 է. իբրու ասի կարող լինի
- 19 յանդիմանել զհրեայսն ես
- 20-25 կտրված է:

1 այլ

2 յայտ է

6 բանդ այդ

7 Եղեկիայ

9 ի տեսանի: Աստուծոյ քումմէ ասէ.

11 նաեւ նշանն

12 օրինակ, երևել

13 հոսեցաւ

15 անդրէն շունի

16 դառնալն, և


19 Եւ փոխ ես

Երկրորդ պահպանակ առաջին երես առաջին սյունյակ պատկ. 4**)

Տպագիր (տպ. եր. 231):

*) Լուսանկարը փոքր է բնագրից:

**) Բնագրի մեծութունն է $20,8 \times 8,5$ սմ., իսկ
լուսանկարը բիշ փոքր է՝ $15 \times 6,5$ սմ.:



Պատկեր 4

Բնագրում ձախ սյունյակի մեծությունը 20,8×8,5 սմ
 Լուսանկարում նույնը 15×6,5 սմ

- 1 ընդ մեզ զերեսունն եւ երիս ամս.
 2 Արդ եթե պարծանս եւս ունի
 3 ցին կուանք. վասն ինն ամ
 4 սեա ժամանակին առաւել եւս
 5 ունիմք վասն բազմամեա ժա
 6 մանակացս. արդ ամենեքեան (վերջինսն)
 վերև գրուած և փոքր)
 7 զսրբութեան ճանապարհաց
 8 շնորհաւքն այ զնթացսն
 9 ընթացցուք. երիտասարդք
 10 եւ կուանք. ծերք եւ տղա
 11 յք. մի ի ցանկութիւնս ինչ
 12 պատրեալք. այլ յաւր հնու
 13 թիւս կանխեալ անուանն տն
 14 մերոյ յի քի. մի տգէտք լի
 15 նիցիմք սրբութեանն. փա
 16 ռաւորութեանն. զի հրշտա
 17 կական են պսակքն. եւ հրշտ
 18 ական է աշողութիւնն.
 19 Ախայեսցուք ի մարմինս
 20 մեր. որ ծագելոցն են ի լեւ
 21—25 կտրված
- 1 և զերիս
 2 եթէ
 5 բազմամեայ
 8 շնորհօքն Աստուծոյ զընթացս
 9 ընթացարուք
 10 և , և
 12 այլ յօրհնութիւնս
 13 կանխեալք անուան տեառն
 15 սրբութեան
 16 փառաւորութեան հրեշտակականք
 17 և հրեշտակաց է յաշողութիւն

Երկրորդ պահպանակ առաջին երես Երկրորդ սյունյակ պատկ. 4
 Տպագիր (տպ. երես 231)

- 1 ծեսց(ուք. Զի առ փոքր մի)
 2 ժամանակի են մեղք, և մշ)
 3 տնջենա(ւոր են տանջանքն)
 4 եւ ամաթն յ(աւիտենից. Զի)
 5 իբրեւ հրշտակք յերկրի շր)
 6 շին սրբութե(ան մշակք)
 7 կուանքն ընդ (աստուածածնին Մա)
 8 ընմայ տնին (զբաժինն. Թքեալ)
 9 եւ ի բաց ընկե(ցեալ լիցին ամե)
 10 նայն պաճու(ճանք զար)
 11 դարանաց. եւ ամենայն
 12 ական յայրատա(բաց եւ ամե)
 13 նայն ճեմելի(ք ստորաքար)
 14 շք. եւ ամենա(յն պաճուճանք)
 15 պաճուճեալք (ամենայն)
 16 խունկք յուզ (ակք ցանկու)
 17 թեան. եւ մե(զ խունկ լիցին ա)
 18 նոշութեան եւ մեզ աղօթք սրբու
 19 թեան գործ(ք բարութեան, մարմ)
 20-25 նոց ս(րբութիւնք զի որ ի կուսէ
 անտի ծնեալ է տէր ասասցէ վասն ձեր,
 արանց սրբականաց կանանց պսակելոց
 Թէ բն)
- 4 ամօթն
 7 կուանք
 8 Մարիամայ
 9 սեւ չունի
 12 յարատաբաց
 13 ստորաքարշ
 17 ցանկութեանց
 18 անուշութեան

Երկրորդ պահպանակ երկրորդ երես առաջին սյունյակ պատկ 5 *).
 Տպագիր (տպ. երես 233)

- 1 ակեցից (ի նոսա եւ ճե)
 2 մեցայց (առ նոքօք և)
 3 եղէց նո(ցա Աստուած և ն)
- 1 քնակեցայց

*) Հիշատակարանի բնագիրը 19,3 X 5 սմ., լուսանկարը՝ 15 X 6,5 սմ.:

- 4 որա եղիցին (իմ ժողովո)
- 5 ւրդ (նմա փառք ե)
- 6 ւ պատիւ յաւ (իտեանս)
- 7 յաւտե (նից ա)
- 8 մ...

7 ամէն

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

- 1 ըքս այս
- 2 դապետին
- 3 աքւոյ
- 4 անիս հայոց
(կտրված տողեր)

- 1 գրչի գրել ի մատն
- 2 նիս յայսմ զտորք
- 3 եւ զտենչալի եւ
- 4 զհոգեւորսն ընթացս.
- 5 Արդ աղաչեմ զնթեր
- 6 ցաւսդ եւ զլսաւդսդ.
- 7 յորժամ ընթեռնուք
- 8 զստացաւդս սորա զտր
- 9 Գուրգէն Արծրունի եւ
- 10 զորդի իւր Ատոմ յիշ

Համեմատութիւնը ցույց է տալիս, որ մեծ տարբերութիւններ չունի հատակտորը տը-պագրվածից, բացի հնչյունաբանութեան և ուղղագրութեան մի քանի երևույթներից, ինչպես դ-ի և լ-ի, թ-ի և գ-ի, ւ-ի և է-ի նշանակված բառերի մեջ: Ապա բարբառական ազդեցութիւն պիտի համարել խոսեցավ՝ փոխանակ հոսեցավ-ի անոշութեան՝ փոխանակ անոշութեան:

Ուշադրութեան արժանի են զնթացսն (պատկ. 4) և զնթերցաւդս (պատկ. 5) ընթերցաւդսն բառերը առանց ը-ի: Նման փոխութիւնները հին ձեռագրերի մեջ էլ հանդիպել է մեզ, օրինակ՝ ինքնէ (Princeton Յաճախապատում):

է

Մի քանի խոսք էլ հնագրական նշանակութեան մասին: Սովորաբար այն կարծիքն է տարածված, թե հայ գրի ծագումն ու զարգացումն ընթացել է հետևյալ աստիճաններով. նախ՝ մշարոպայան կոչված գրերը, ապա բոլորգիրը և վերջապես նոտրագիրն ու շեղագիրը: Սակայն մեր գրչութեան իրական մնացորդների ուսումնասիրութիւնը ցույց է տալիս, որ այդպես չէ: Նախ հայտնենք, որ երկաթագրի բոլոր տեսակներն էլ, մեծ, միջին և փոքր, երևում են ձեռագրերի մեջ միևնույն ժամանակ, երբեմն նույն ձեռագրի մեջ, և պեսպիսութեամբ: Կա երկաթագրի բոլորած, ուղղանկյուն և թեք տեսակը, և երբեմն նույն ձեռագրի մեջ տարբեր տեսակները և ձևակերպութիւնները^{*)}:

Բոլորգիրը ըստ ձեռագրերի նույնչափ

հին է, որչափ երկաթագիրը, այսպես՝ Գեվորգյան ցուցակ 102 կամ 2679, որ 971 թվականի ձեռագիր է, նշանավոր է ոչ միայն յուր հնութեամբ և բովանդակութեամբ իբրև ժողովածու, այլև նյութով, որ թուղթ է և ամենահինը հայոց մեջ^{*)}: Բոլորգրի երկու տեսակը կա, իրենց պեսպիսութեամբ. առնվելիս, որ գործածական է արեւելյան վանքերի մեջ և արևմտյան, որ Կիլիկիայում է ամբելի զարգանում և հետո նաև արեւելք անցնում և կատարելապես իշխող դառնում, որ է և ներկա մեր տպագրութեան բոլորգիրը: Երկրորդ հնագույն օրինակն ունինք դարձյալ թղթի վրա 999 թվականից, բայց շեղագրին նմանութիւն բերելով: Նմանահանութիւնը տալիս է Ալիշան յուր Այրարատի մեջ^{**)}: Ապա ունենք 1040, 1174, 1196, 1190 և այլն թվականով բոլորագիրներ^{***)}:

Եթե շեղագրի հնագույն օրինակ չհամարենք Ալիշանի բերած նմանահանութիւնը, ունենք Ժ. դարի վերջերից կամ ԺԱ-ի սկզբներից իսկական շեղագիր՝ Գրիգոր գրչի ձեռքով^{****)}: Ունենք և շեղագիր արձանագրութիւններ Գագիկ Ա-ի ժամանակից 990-1021^{*****)}, իսկ ձեռագրերի մեջ 1118, 1159,

*) Անդ § 56, տախտ. իր:

**) Այրարատ 496:

***) Մեր ռժարտեզ հայ հնագրութեան, ցուցակ պատկերների և պրակների թվականների համապատասխան տեղում:

****) Անդ § 46, տախտ. իա:

*****) Էջմիածնից—Օշական հաճապարհին Թարգմանչաց վանքի վերա և Կատարանիքի թագուհու խաչաքարը Դառնիում:

*) Տես մեր ռժարտեզ հայ հնագրութեան, 260. № 229/2374, փոստիկի կազմով ավետարանը, § 41, 42, 43, 44 տախտ. իր, իթ, իէ, ժը § 37, տախտ. իզ:

1211, 1215, 1244, թ. թ. վերջինը Սմբատ Գունդստապլի ձեռքն է*):

Հայ գրչության ավելի հնագույն մնացորդները ունենք վիմական արձանագրություններով, ինչպես՝ Օձունի, Եղուարդի մեծ բազիլիկայի, Արագածի Ավանի, Պտղոմեի, Կարսի Նախճավանի պատերի վերա Ձ. դարից, իսկ է դարից՝ Կոմիտասի, Եզրի, Կոտայքի Ավանում և Բագրևանդի Ս. Հովհաննեսում, Ներսեհ պատրիկ Կամսարականի՝ Թալինում, Մրենի, Ալամանի, Բագարանի, Զվարթնոցի, որոնք սովորաբար մեարդայան խոշոր տաճերով են գրված, բայց կան և միջին երկաթագրով, ինչպես Օձունում և Պտղեվանքում, որոնք Ձ դարի առաջին տասնամյակի և երկրորդ քառորդի գրություններ են: Օձունում արևելյան լուսամուտի ճակատին մի քանդակ կա, որի կենտրոնում Հիսուսի անդրին է, բաց ավետարանը ձեռքին և վերան գրված է միջին երկաթագրով, իսկ ՋՐԱՆ է էՐ ԲԱՆՆ և երկրորդ երեսում — ԲԱՆ էՐ ԱՌ ԱՄ ԵՒ ԱՄ էՐ ԲԱՆ: Իսկ Պտղոմեի եկեղեցին շինողի քանդակի տակ միջին երկաթագրով քանդակված է ՄԱՆՈՒԵՂ ԱՄԱՏՈՒՆԵԱՑ ՏԷՐ: Ձ դարի գործ ենք համարում նաև Արագածի Ավանի բազիլիկ եկեղեցու խոյակի արձանագրությունը:

ՔՍ ԱՄ ԱԻՐԶՆԵԱ(Լ ԵՍ ՅԱԻՏԵԱ)ՆՍ ՅԻՇ ԷՔՍ ՍՏԷ (ՓԱՆՈՍ Ի ՔՈ ԹԱԳ) ԱԻՈՐՈՒԹԵԱՆ*):

*) Մեր ճիշդ և Ուսումնասիրություններ Հայ արձանատի և մշակողի պատմության, պրակ. Գ., Նյու-Յորք, 1944, էջ 14, 22, 36, պատկ. 14:

**) Քարտեզ Հայ հնագրության, թվականների համապատասխան տեղում:

Այս տեղեկությունները հիշում ենք, որ պեսզի ցույց տանք, որ բոլոր տեսակներն էլ հին են, որոնց տվյալները տեսանք, բացի նոտրագրից: Հայ գրի զարգացումը ոչ թե մի տեսակից մյուս տեսակին է անցնում, այլ տեսակներն իրենց պեսպիսություններն ու զարգացման ընթացքն ունին Գրչության արվեստի պատմության մեջ, որի մասին մեր տեսությունն ու հիմնավորումը, հուսանք, թե պիտի հաջողվի կարճ ժամանակից հետո մատչելի դարձնել բանասիրության:

Տարաբախտաբար ավելի հին, քան 887 թվականը ձեռագիր շունենք, ուստի և հայտնաբերումը այս հատակոտորի ժամանակակից կամ քիչ ավելի հին, ունի իր արտաքին կարգի նշանակությունը: Լազարյան ճեմարանի ավետարանը բոլորաձև երկաթագիր է, իսկ մեր հատակոտորը ուղղանկյուն և միջին երկաթագիր, այսինքն մի նոր ապացույց վերը հիշված մտքերի: Անջուշտ կան ուրիշ հատակոտորներ շատ ավելի հին: Հայ բանասիրության առաջ մի նոր փնդիր է գրվում՝ հետամուտ լինել հատակոտորների կամ կրկնագիրների ուսումնասիրության, որպեսզի հայ գրի զարգացման մի մեծ բացը չորս դարի ընթացքում գոցել կարողանանք: Վիմական արձանագրություններով այդ բացը լիովին լցնել կարելի չէ, ոչ այն պատճառով միայն, որ ութերորդ դարը շատ ամուլ է արձանագրություններով, այլ և որովհետև տարբեր են արձանագրությունների և ձեռագիրների գրչության նյութն ու գրության եղանակները:

1946 թ. հունիս, Անթիլիաս

